69
р-4

ԲՆԱԿԿՈՈՊՄԻՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 6

25 SEP 2010

# ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԺՈՂԿՈՄԱՏԻ № 762 ՀՐԱՄԱՆԸ

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

**28 ՈԳՈՍՏՈՍԻ, 33 Թ.**

ԲՆԱԿԿՈՈՊՄԻՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1933 Թ.

69

11 SEP 2013

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

# ԲՈԼՈՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻՆ. —

*Յերկոմի քարտուղարության վորոշմամբ, բնակկոոպմիության վարչությունը տպագրելով ընկ. Որջոնիկիձեյի կողմից տրված № 762 հրամանը 28/8—1933 թ. ուղարկում ենք ձեզ և խնդրում ենք այդպիսին տարածել ձեր շինարարական ոբյեկտների վրա:*

*Բնակկոոպմիության վարչությունը խնդրում է միմյանց փորձը հետագայում ոգտագործելու համար, հայտնել մեզ թե ինչպես եք վերակառուցել ձեր աշխատանքները համաձայն հրամանի և ինչպես եք մասսայականացրել այդ հրամանը ՃՏՍ-ի և բանվորների մեջ:*

*Սպասում ենք ձեր պատասխանին:*

*Բնակկոոպմիության Վարչ. նախագահ՝* Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Կուսբջիջի քարտուղար՝* Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

*Խմբկոմի նախագահ՝* Վ. ՍԱՆԱՍԱՐՅԱՆ

*19 սեպտեմբերի 1933 թ.*
*Յերևան*

Պատվեր 2027. [illegible] Գլավլիտ 8752.

28.144

# ԲՈԼՈՐ ԲԱՆԿՈՄ-ԽՄԲԿՈՄՆԵՐԻՆ ՅԵՎ ՃՏՄ-Ի ԲՅՈՒՐՈՆԵՐԻՆ

ԽԻՍՏ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՅԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՏԱԼ ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԺՈՂԿՈՄԱՏԻ ՈԳՈՍՏՈՍԻ 28-Ի ԸՆԿ. ՈՐՋՈՆԻԿԻՁԵՅԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՅԵՂԱԾ ՀՐԱՄԱՆԻՆ, ՎՈՐԸ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ՎԵՐԱԲԵՐՎՈՒՄ Ե ՄԵՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆԸ, ՍՏՈՐԻՆ ՈՂԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՄՐԱՑՄԱՆԸ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂԱՑՄԱՆԸ, ԴԻՄԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆԸ ՅԵՎ ԱՅԼՆ:

ՅԵԼՆԵԼՈՎ ՎԵՐՈՀԻՇՅԱԼ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ՝ ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ Ե ԲՈԼՈՐ ԿԱՌՈՒՑՈՂ ԲԱՆԿՈՄ-ԽՄԲԿՈՄՆԵՐԻՆ ՅԵՎ ՃՏՄ-Ի ԲՅՈՒՐՈՆԵՐԻՆ, ԱՆՄԻՋԱՊԵՍ ՁԵՌՆԱՐԿԵԼ ԿՈՆԿՐԵՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՇԻՆ. ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ ՀՐԱՄԱՆԸ ԼԱՅՆ ԿԵՐՊՈՎ ՄԱՍՍԱՅԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՈՂԱԿՆԵՐՈՒՄ, ՊԱՐԶԱԲԱՆԵԼՈՎ ՀՐԱՄԱՆԻ ԿԱՐԵՎՈՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՇԽԱՏՈՂ ԲՈԼՈՐ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԵՋ:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ը ՀԱՅՏԱՐԱՐՎՈՒՄ Ե ԿԱՌՈՒՑՈՂ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՊՐՈՖ. ՈՐ, ՅԵՐԲ ԲԱՑԱՌԱՊԵՍ ՔՆՆՈՒԹՅԱՆ Ե ԱՌՆՎԵԼՈՒ ԱՅԴ ԽՆԴԻՐԸ՝ ԿՅԱՆՔՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Ե ԲՈԼՈՐ ԲԱՆԿՈՄՆԵՐԻՆ, ԿԵՆՏՎԱՐՉՈՒԹՅԱՆՆ ԻՐԱԶԵԿ ՊԱՀԵԼՈՒ ԱՅԴ ԽՆԴՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ:

ՀԱՄԽ-Ի ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՏԱՆԻՆ
ԿԵՆՏՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ



ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос Библиотека ЗССР-Арм. ССР

# ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

## ԱՌԱՆՁԻՆ ՈԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐՈՒՄ ՈՒ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏՐԵՍՏՆԵՐՈՒՄ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՊԵՐԱՏԻՎ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծանր արդյունաբերության Ժողովրդական Կոմիսարիատի
հրամանը

Մոսկվա — № 762 — 28 ոգոստոսի 1933 թ.

Շինարարական աշխատանքների ասպարիզում միանձնյա ղեկավարությունն ամրացնելու, աշխատանքների նկատմամբ ունեցած ղեկավարության վորակը բարձրացնելու և դիմազրկությունը վերացնելու, հիմնական ոպերատիվ աշխատողների (տասնապետ, աշխատանքների ղեկավար) իրավունքներն ու պատասխանատվությունը կատարված աշխատանքի ժամկետների, վորակի ու կատարված աշխատանքի արժեքի համար ուժեղացնելու, շինարարական ինդուստրիայի կառավարչական ապարատները պարզացնելու և նրանց կառուցվածքային առանձին մասերի աշխատանքի մեջ յեղած զուգահեռականությունը (պարալելիզմ) վերացնելու նպատակով, հաստատել առանձին ոբյեկտներում, շինարարական հրապարակներում ու տրեստներում շինարարական աշխատանքների նկատմամբ ոպերատիվ ղեկավարությունը կազմակերպելու հետևյալ հիմնական կանոնները.—

## I. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Ի փոփոխումն կառուցումներում աշխատանքների նկատմամբ ունեցած ղեկավարության ներկայումս գոյություն ունեցող կարգի, շինարարական ոբյեկտի վրա շինարարական արտադրության հիմնական ղեկավարներ համարել — ա) բրիգադիրին, բ) տասնապետին և գ) աշխղեկին:

Մի քանի ոբյեկտների աշխատանքի ղեկավարությունը դնել աշխատանքի պետերի (ավագ ղեկավարների) վրա:

Աշխատանքի պետերի (ավագ ղեկավարների) աշխատանքը միացնել շինարարական տրեստի միջոցով:

Շինարարական աշխատանքները ղեկավարող մյուս բոլոր միջանկյալ ինստանցիաները լիկվիդացիայի յենթարկել:

2. Յուրաքանչյուր ոբյեկտի շինարարության նկատմամբ լիակատար ղեկավարություն ունենալն ամբողջապես դնել աշխատանքների ղեկավարների վրա: Վերադաս ինստանցիաներին պարտավորեցնել իրենց ղեկավարությունն աշխատանքների նկատմամբ իրականացնել միմիայն աշխղեկի միջոցով:

3. Շինարարության մեջ սահմանել յերեք հիմնական պաշտոն — բրիգադիր, տասնապետ և աշխղեկ: Բրիգադիրի պաշտոնում նշանակել ավելի քան վորակյալ բանվորների:

Տասնապետի պաշտոնում նշանակել գերազանցապես ինժեներների ու տեխնիկների, իսկ այնտեղ, ուր հնարավոր է—վորակյալ պրակտիկանտներին: Աշխատանքների ղեկավարի պաշտոնում նշանակել միայն այն անձանց, ովքեր ինժեների կամ տեխնիկի վորակավորում ունեն (նայած աշխատանքների տեխնիկական բարդությանը, ծավալին ու աշխատանքի պայմաններին և օբյեկտի նախահաշվային արժեքին) և հանձնարարվելիք աշխատանքին համապատասխան արտադրական ստաժ:

4. Շինարարության արտադրական տեխնիկական օպերատիվ աշխատողների նշանակումները կատարում են աշխատանքների ավագ ղեկավարներին՝ տրեստը, աշխատանքների մյուս ղեկավարներին՝ տրեստը՝ ավագ աշխղեկի առաջադրանքով կամ նրա հետ համաձայնեցնելով, տասնապետներին՝ ավագ աշխղեկը (աշխատանքների պետ) և բրիգադիրներին՝ աշխղեկը:

## 2. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5. Համատեղ աշխատանք կատարող միևնույն կամ հարակից վորակավորում (պրոֆեսիա) ունեցող բանվորներին համախմբելու համար կազմակերպել բանվորական բրիգադներ՝ գերազանցապես տվյալ բրիգադի մասնագիտության բանվորներից՝ ըստ աշխատանքի առանձին տեսակների:

6. Բրիգադը արտադրական ստորին միավորն է հանդիսանում շինարարության մեջ:

Նայած բրիգադի մեջ մտնող բանվորների թվին ու աշխատանքի պայմաններին՝ բրիգադի ներսում կազմվում են ողակներ:

7. Բրիգադի ու նրա կազմի մեջ մտնող ողակների աշխատանքը կազմակերպելու և գլխավորելու նպատակով, աշխղեկի կողմից տվյալ բրիգադի համար նշանակվում է մեկ բրիգադիր, վորը ստորին պաշտոնական վարչական անձնավորություն է հանդիսանում և պատասխանատու յե իր բրիգադի կարգապահության ու նորմալ աշխատանքի համար: Բրիգադիրը յենթարկվում է տասնապետին:

Բրիգադիրն աշխատանքից չի ազատվում և աշխատում է բրիգադի բանվորների հետ համահավասար՝ իր պարտականությունների կատարման համար հիմնական աշխատավարձից դուրս վարչությունից ստանալով նաև լրացուցիչ աշխատավարձ՝ 20-ից մինչև 40 ռուբլու սահմաններում (նայած աշխատանքին ու բրիգադում աշխատող բանվորների թվին), բացի այդ նաև պարգևատրություն է ստանում՝ առաջադրանքները գերակատարելու համար — բրիգադի աշխատավարձի ընդհանուր գումարի մինչև 2 տոկոսի չափով՝ այն դեպքում իհարկե, յերբ կատարված աշխատանքը հարկ յեղած վորակի յե:

Բրիգադիրներին լրացուցիչ աշխատավարձ վճարելու ու նրանց պարգևատրման համար անհրաժեշտ լրացուցիչ ծախքերը կատարվում են վարչական-կազմակերպչական ծախքերի վրա սահմանված կալկուլյացիոն վերադիրների հաշվին:

## 3 ԲՐԻԳԱԴԻՐԻ ՅԵՎ ԲՐԻԳԱԴՆԵՐԸ ՂԵԿԱՎԱՐՈՂ ՏԱՍՆԱՊԵՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

8. Բրիգադիրի վրա դնել հետևյալ պարտավորությունները.—

ա) Բանվորների դասավորումն ըստ աշխատանքի տեղերի:

բ) Ավելի քիչ փորձ ունեցող՝ հատկապես յերիտասարդ բանվորների հրահանգումն ու նրանց օգնություն ցույց տալը:

գ) Աշխատանքները կանգ առնելու այս կամ այն պատճառները վերացնող սկզբնական միջոցներ ձեռք առնելը. իսկ այնպիսի դադարների ու



վնասվածքների դեպքում, վորոնց բրիգադիրն իր բրիգադի ուժերով չի կարող վերացնել, անմիջապես այդ մասին պետք է հայտնել տասնապետին կամ տվյալ օբյեկտի աշխատանքների ղեկավարին:

դ) Պատասխանատվություն բանվորների պարապուրդ տալու համար. այն պարապուրդների մասին, վորոնք հնարավոր չէ կանխել իրեն՝ բրիգադիրի կարգադրությամբ, նա պարտավոր է այդ մասին ժամանակին նախազգուշացնել տասնապետին:

ե) Հսկողություն բրիգադին հանձնված ինվենտարի ու գործիքների պահպանման ու նրանց ճիշտ օգտագործման վրա, նաև բրիգադին հանձնված նյութերի ու գործիքների բաշխումը բրիգադի բանվորների միջև:

զ) Պայքար գործալքների, չվողների, գոփողների ու այլ՝ արտադրությունը կազմալուծողների դեմ, մանրազնին ու ուշադիր հսկողություն աշխատանքի չդուրս գալու վրա. պարզել դրանց պատճառները և անմիջապես հայտնել տասնապետին աշխատանքային կարգապահությունը խախտելու դեպքերի մասին:

է) Մասնակցություն իր բրիգադի բանվորների ընտրությանը:

9. Տասնապետներն անմիջականորեն յենթարկվում են աշխատանքի ղեկավարին:

10. Տասնապետի վրա պատասխանատվություն դնել իրեն յենթակա արտադրական բրիգադների աշխատանքի համար և նրա հիմնական պարտավորությունները համարել —

ա) Աշխատանքների ղեկավարից արտադրական առաջադրանքներ ստանալն ու այն կատարելու համար բրիգադներին հանձնելը:

բ) Բանվորներից աշխատանքն ընդունելը, ձգտելով սահմանված նորմաների անպայման կատարման ու աշխատանքի համապատասխան վորակի պահպանման (կատարված աշխատանքի պիտանիության տոկոսը վորոշելու և այն լիակատար կերպով կամ մասամբ խոտան (բրակ) գտնելու պատասխանատվությունը դրվում է տասնապետի վրա):

գ) Իրեն յենթակա բրիգադների կատարած աշխատանքները չափելը:

դ) Աշխատանքի վայրում բանվորներին հրահանգներ տալը:

ե) Թերությունները ու արտադրական պարապուրդները վերացնելու ուղղությամբ բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք առնելը. նաև միջոցառումներ՝ աշխատանքի անվտանգության տեխնիկայի օգնությամբ:

զ) Բրիգադների արտադրական առաջադրանքները կատարելու նպատակով, տասնապետը պետք է անհատական նախաձեռնություն հանդես բերի բանվորական ուժը, մեխանիզմներն ու գործիքները ռացիոնալ ձևով տեղադրելու և օգտագործելու ուղղությամբ, վորը հնարավորություն ապահովի բանվորներին հասնելու աշխատանքի բարձր արտադրողականության և դրա հիման վրա բարձրացնելու աշխատավարձը:

ը) Բրիգադներին ու առանձին բանվորներին աշխատանքի վայրին ու մեխանիզմներին ամրացնելն ու բանվորական տեղի ճիշտ կազմակերպումն ապահովելը:

թ) Պայքար գործալքների, չվողների, գոփողների, ու այլ՝ արտադրությունը կազմալուծողների դեմ, բրիգադի ներսում, նրանց տույժի յենթարկելով և մինչև իսկ աշխատանքից հեռացնելով՝ ներքին կարգապահական կանոնների համաձայն:

ժ) Սահմանված նորմաների ու գնահատումների կիրառումը՝ աշխղեկի հաստատությանը ներկայացնելով առաջարկներ՝ բանվորներին ու բրիգադիրներին պարգևատրելու կամ աշխատանքի վատ վորակի ու անփույթ աշխատանքի համար վարձատրությունը պակասեցնելու վերաբերյալ:

ի) Պլանների քննարկման ու բրիգադի անդամների հետ միասին հանդիպական պլաններ մշակելու գործի կազմակերպումը՝ դաստիարակչական աշխատանք կատարելով բանվորների մեջ, ներգրավելով նրանց սոցմրցման ու հարվածայնության մեջ, բացատրելով նրանց բանվորներին շինարարությանն ամրացնելու ու հոսունությունը վերացնելու հարցերի կարևորությունը, օժանդակելով բանվորներին՝ իրենց նյութական-կենցաղային պայմանները բարելավելու գործում:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

11· Աշխատանքների ղեկավարը աշխատանքների լիակատար ղեկավարն է հանդիսանում իրեն հանձնարարված օբյեկտում, անմիջականորեն պատասխանատու յե նախագծի առաջադրանքների կատարման, շինարարության աշխատանքների կազմակերպման ու այն կալկուլիացիաներին համապատասխան ռացիոնալ ձևով վարելու, աշխատանքը կատարելու ժամկետների ու տեմպի, կատարված աշխատանքի վորակի ու ինքնարժեքի և աշխատանքի կազմակերպման ու աշխատավարձի խնդիրների համար:

12· Աշխատանքի ղեկավարներին (աշխղեկ) բեռնաթափել տնտեսական-սպասարկու ֆունկցիաներից՝ կենտրոնացնելով նրանց աշխատանքների պետի (աշխատանքների ավագ ղեկավարի) կամ տրեստի ապարատում և ընդարձակելով նրանց ոպերատիվ-արտադրական ֆունկցիաները:

Աշխղեկի ամենագլխավոր պարտավորությունները ու ֆունկցիաները են.—

ա) Աշխատանքների նկատմամբ ոպերատիվ ղեկավարություն իրականացնելը:

բ) Աշխատանքների համար անհրաժեշտ նյութական միջոցների պահանջագրեր մշակելն ու այն աշխատանքների պետի (ավագ ղեկավարի) միջոցով ստանալը (կամ տրեստի միջոցով — յերբ աշխղեկն անմիջականորեն տրեստին է յենթակա):

գ) Կատարվող աշխատանքի երշտության, ժամկետների, տեմպերի, վորակի ու ինքնարժեքի, նաև նյութական միջոցների խնայողաբար ու նպատակահարմար ծախսման նկատմամբ ամենօրյա տեխնիկական հսկողություն ունենալը:

դ) Շինարարության վերաբերյալ տրված դիրեկտիվների, որենքների և տեխնիկական կանոնների ու պահանջների կատարումն ապահովող կոնկրետ ձեռնարկումներ մշակելն ու նրանց կենսագործումը:

ե) Աշխատանքների անվտանգությունն ու շինարարական աշխատանքների անվտանգության տեխնիկայի վերաբերյալ սահմանված կանոնների կատարումն ապահովելը:

զ) Շենքը կամ կառուցումը հիմնական առանցքների բաշխելը:

13· Աշխղեկին են յենթարկվում նրա կողմից ղեկավարվող աշխատանքի վրա աշխատող բոլոր բանվորները ու ծառայողները: Աշխղեկն է կատարում իր կողմից ղեկավարվող շինարարության բոլոր ինժեներա-տեխնիկական աշխատողների, ծառայողների ու բանվորների ընդունումն ու հեռացումը՝ այն ձևակերպելով աշխատանքների պետի (ավագ ղեկավարի) ապարատի կամ տրեստի միջոցով, կազմակերպում է բրիգադները և նշանակում ու աշխատանքից հեռացնում բրիգադիրներին՝ այդ կատարելով համապատասխան տասնապետի առաջադրանքով կամ նրա հետ համաձայնեցնելով!

Աշխղեկը պարտավոր է պայքար մղել գործալիքների, չվողների, գրափողների, ու այլ՝ աշխատանքը կազմալուծողների դեմ և հեռացնել նրանց աշխատանքից՝ ներքին կարգապահական կանոնների համաձայն:

Աշխղեկը պարտավոր է նշգրիտ կերպով կիրառել կյանքում սահմանված աշխատանքի միասնական նորմաները ու համամիութենական միասնական գնահատումները՝ նրանց բարձրացում թույլատրելով միմիայն հատուկ սահմանված կարգով:

Հանդիսանալով ԳԿՀ վորպես վար. ճող անձամբ կամ իր կողմից նշանակված անձնավորության միջոցով, աշխղեկը վերջնականապես հաստատում է մեկ անգամ կատարվող (разовый), չնորմայավորված աշխատանքի գնահատումները, նաև պարգևատրություն է սահմանում բանվորների ու բրիգադիրների համար՝ համաձայն տարիֆային պայմանագրի և իր կարգադրությամբ կիրառման մեջ է դնում աշխատանքի վարձատրման պրեմիալ-պրոգրեսսիվ գործարքային սիստեմը:

Աշխղեկն ու շինարարության վող-



տեխնիկական արտադրական անձնակազմը պետք է աշխատանքի վայրում լինեն մինչև աշխատանքներն սկսելը:

Աշխղեկը՝ տասնապետին, իսկ տասնապետը բրիգադիրին պետք է նախորդ օրվա յերեկոյան առաջադրանք տա՝ հաջորդ օրվա համար:

14· Նայած աշխատանքների ծավալին, կազմին, տեխնիկական բարդությանը և արժեքին, աշխատանքների պետի (ավագ ղեկավար) կամ տրեստի կողմից՝ վարչատնտեսական ծախքերի հաստատված լիմիտներն անպայման պահպանելու պայմանով՝ սահմանվում են աշխղեկի ապարատի համապատասխան հաստիքներ (շտատ), այդ հաստիքների մեջ մտցնելով հետևյալ նոմենկլատուրայի բոլոր կամ վորոշ կատեգորիաների անհրաժեշտ թվով աշխատողներ.—

1) Աշխղեկ:

2) Տասնապետ (60—100 բանվորին մեկ տասնապետի հաշվով):

3) Բրիգադիր (15—30 բանվորին մեկ բրիգադիրի հաշվով):

4) Տնտեսական տասնապետ՝ մատակարարման, տրանսպորտի ու տնտսպասարկման բոլոր աշխատանքների համար՝ բանվորների թիվը 250-ից ավել լինելու դեպքում:

5) Տասնապետ՝ մոնտաժային աշխատանքների գծով (այն դեպքում, յերբ աշխղեկին կահավորում, էներգետիկ սարքավորումների կամ մետաղյա կառուցվածքների մոնտաժի աշխատանք է հանձնարարվում):

6) Տաբելշչիկ (150—250 բանվորին մեկ տաբելշչիկի հաշվով):

7) Պահեստապետ՝ նյութերի պահեստ ունենալու դեպքում:

8) Աշխղեկի ոգնական՝ մեծ ծավալի ու բարդ աշխատանքների դեպքում:

9· Արտադրության պլանավորման ու պլանների կատարման հաշվառման պատասխանատու կատարող:

10) Նորմայավորող (տարիֆիկատոր—կալկուլյատոր 300—500 բանվորին մեկ նորմայավորողի հաշվով):

11) Հաշվետար—գործավար:

12) Հաշվառման պատասխանատու կատարող:

13) Գծագրող (մեծ ծավալի աշխատանքների դեպքում):

14) Ցրիչ—հավաքարար:

Վերացնել աշխղեկների գրասենյակի հաստիքներում ներկայումս գոյություն ունեցող պաշտոնների բոլոր մյուս նոմենկլատուրային կատեգորիաները:

## 5· ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԵՏԵՐԻ (ԱՎԱԳ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ) ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

15· *Աշխատանքների պետի (ավագ ղեկավարի) վրա դնել հետևյալ պարտականությունները.—*

*ա) Իր կողմից ղեկավարվող աշխատանքների տեխշինֆինպլաններ մշակելը՝ բոլոր ցուցանիշների տեսակետից:*

*բ) Աշխատանքների կազմակերպումը, աշխատանքների կազմակերպման նախագծերի ու արտադրական նախահաշիվների մշակումը՝ կամ նրանց մեջ ճշտումներ մտցնելը՝ տեղական կոնկրետ պայմաններին համապատասխան, և աշխատանքների կատարման ժամկետները, տեմպերը, վորակն ու մինիմալ արժեքն ապահովող բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք առնելը:*

*գ) Տեխնիկական նորմայավորումն ու տարիֆիկացիան:*

*դ) Տեխշինֆինպլանների ու պայմանագրերի կատարման ստուգումն ու նրանց կատարման նկատմամբ ամենօրյա օպերատիվ հսկողություն ունենալը:*

*ե) Ղեկավար տեխնիկական անձնակազմի մեջ առաջացող բոլոր տեխնիկական հարցերին լուծում տալը:*

*զ) Աշխատանք տվողների հետ կապ պահպանելը, նրանց հետ կատարվող բոլոր հաշիվները ձևակերպելն, ավարտելը և աշխատանքների համար հասանելիք վճարումներն ստանալն ու այն՝ ֆինպլանի, կալկուլյացիաների ու տրեստի ցուցմունքների համաձայն ծախսելը՝ վարելով հաշվա-*

պահական ավարտված հաշվետվությունը:

ը) Աշխատանքները սահմանված նախագծային տվյալներով՝ տեխնիկական կադրերով, բանվորական ուժով, մեխանիզմներով, տրանսպորտով, արտահագուստով, գործիքներով, շինանյութերով, կուլտսպասարկումով, բնակարաններով և այլնով ապահովելը, տրեստի անմիջական ղեկավարությամբ ու նրա հանձնարարությամբ շինարարությունը նյութերով ապահովելու վերաբերյալ պայմանագրեր կնքելու և նրանց կենսագործման վրա հսկելու միջոցով:

թ) Շինարարական մեխանիզմների էֆֆեկտիվ օգտագործման ղեկավարումն ու նրա նկատմամբ հսկողություն ունենալը:

ժ) Բանվորական կադրերի վերավորակավորման ու նրանց վորակավորումը բարձրացնելու ուղղությամբ կոնկրետ ձեռնարկումներ մշակելն ու նրանց իրականացումը:

ի) Ղեկավար աշխատանքներում բանվորական մատակարարման գործի կազմակերպումն ու կենսագործումը:

լ) Շինարարական հրապարակին կից գոյություն ունեցող ժամանակավոր օժանդակ ձեռնարկությունների աշխատանքի կազմակերպումն ու նրանց արտադրական – տնտեսական գործունեության նկատմամբ կոնկրետ ղեկավարություն ունենալը:

16. Վարչության գլուխ պետք է կանգնած լինեն աշխատանքների պետն ու նրա տեղակալը — գլխավոր ինժեները: Աշխատանքների պետի (ավագ աշխղեկի) ոգնականի պաշտոնը վերացնել: Այն դեպքում, յերբ վարչության գլուխ նշանակվում է աշխատանքների ավագ ղեկավարը, նրա տեղակալը վարում է վարչական-տնտեսական ֆունկցիաները:

17. Աշխատանքների ղեկավարի (ավագ ղեկավարի) վարչության հիմնական բաժինը արտադրական-պլանային բաժինն է հանդիսանում, վորը գլխավորում է գլխավոր ինժեները և վորն իր կազմում ունի.—

ա) Արտադրական պլանավորման խմբակ:

բ) Աշխատանքների կատարման ու աշխատանքի կազմակերպման խմբակ (աշխատանքների կազմակերպման նախագծումը, նախահաշվային հարցեր, արտադրության հաշվառում, արտադրա-տեխնիկական հրահանգում, տարիֆային ու տեխնիկական նորմայավորում, նախապատրաստական աշխատանքների կազմակերպում, լաբորատորիա և այլն):

գ) Պայմանագրա-հաշվային խմբակ:

դ) Ավագ մեխանիկի խմբակ (մեխանիզմների հավաքման ու սարքավորման կազմակերպում, նրանց նորմալ օգտագործման ղեկավարություն, պլանային նախազգուշական ու ընթացիկ վերանորոգման կազմակերպում, հրահանգում և այլն):

ե) Ժամանակավոր օժանդակ ձեռնարկությունների խմբակ, վորոնք (ձեռնարկությունները) աշխատանքների կամ մետաղյա կոնստրուկցիագործությամբ կարող են անցնել տնտհաշվարկի:

զ) Մոնտաժային խմբակ (այն դեպքում, յերբ եներգետիկ սարքավորումների կամ մետաղյա կոնստրուկցիաների մոնտաժ է կատարվում):

Բացի այս հիմնական բաժնից, աշխատանքների պետի (ավագ ղեկավարի) վարչության մեջ պետք է լինեն նաև հետևյալ բաժինները կամ խմբակները.—

1) Հաշվապահական — ֆինանսական:

2) Մատակարարման (շինանյութերի կենտրոնական պահեստով) ու տրանսպորտի (այն դեպքում, յերբ շինարարությունը սպասարկվում է սեփական տրանսպորտով)՝ գարաժով, ախոռով, դեպոյով և այլն:

3) Կադրերի (բանվորական ուժի հավաքագրում, վարձում, կադրերի պատրաստում, նրանց կուլտուրական սպասարկում և այլն):

4) Բանվորական մատակարարման:

5) Բնակարանային կոմունալ՝ պարետներով ու համապատասխան սպասարկող հաստիքներով՝ առանձին հանրակացարանների համար և

6) Քարտուղարություն:



Աշխատանքների պետի (ավագ ղեկավարի) վարչության ապարատի հաստիքները սահմանվում են տրեստի կողմից՝ սահմանված լիմիտների սահմաններում, վարչության աշխատողների ընդհանուր թվի ու նրա կողմից ղեկավարվող աշխատանքների վրա աշխատող բանվորների թվի հարաբերությամբ և վարչա-տնտեսական ծախսերի վրա կատարված կալկուլյացիոն վերադիրներին համապատասխան:

## 6. ՏՐԵՍՏԻ ԱՊԱՐԱՏԻ ՄԱՍԻՆ

19. Տրեստն ու նրա աշխատանքները ղեկավարելու համար նշանակել տրեստի կառավարիչ, գլխավոր ինժեներ (վորը միաժամանակ լինում է կառավարիչի առաջին տեղակալը) և տրեստի կառավարչի յերկրորդ տեղակալ:

20. Գլխավոր ինժեներին կից ունենալ անհրաժեշտ թվով գլխավոր ինժեների ոգնականներ՝ նրանց սպասարկող ինժեներա-տեխնիկական աշխատողներով՝ տրեստի կողմից կատարվող աշխատանքների ընթացքի նկատմամբ ամենօրյա օպերատիվ հսկողություն ունենալու համար:

21. Շինարարական տրեստի հիմնական բաժիններ համարել.—

1) Արտադրական բաժին՝ տրեստի գլխավոր ինժեների անմիջական ղեկավարությամբ, վորի կազմի մեջ մտնում են.—

ա) Պայմանագրա-հաշվային-կալկուլյացիոն խմբակները:

բ) Աշխատանքների կազմակերպման ու նախագծման խմբակները, վորի հաստիքներում կարող են նախատեսված լինել 1—2 պատասխանատու կատարողներ՝ ռացիոնալիզացիայի ու բանվորական գյուտարարության աշխատանքների գծով:

գ) Աշխատանքի, տեխնիկական ու տարիֆային նորմայավորման խմբակները:

դ) Գլխավոր մեխանիկի խմբակներ՝ մեքենաների պարկով:

ե) Մոնտաժային խմբակներ (տրեստի կողմից զգալի քանակությամբ սարքավորման կամ եներգետիկ սարքավորումների մոնտաժային աշխատանքներ կատարելու դեպքում):

2) Օժանդակ ձեռնարկությունների ու սեփական կապիտալ շինարարության բաժին, վորը յենթարկվում է տրեստի գլխավոր ինժեներին (օժանդակ ձեռնարկությունների աշխատանքը շատ չլինելու և արտադրական վոչ ընդարձակ ծրագիր ունենալու դեպքում, այդ բաժինը միացվում է արտադրական բաժնին՝ իբրև նրա մի խմբակը, կամ բոլորովին վերացվում է):

3) Պլանային տնտեսական բաժին (հավաքական պլանավորում և պլանների կատարման ստուգում՝ բոլոր ցուցանիշների տեսակետից), վորը գտնվում է տրեստի կառավարչի անմիջական ղեկավարության տակ:

Այս յերեք հիմնական բաժիններից բացի, տրեստում պետք է լինեն.—

1) Գլխավոր հաշվապահություն՝ ֆինանսական խմբակով (գտնվում է տրեստի կառավարչի ղեկավարության տակ):

2) Մատակարարման բաժին (կառավարչի տեղակալի ղեկավարության տակ), վորը օպերատիվ աշխատանք է կատարում շինանյութեր ու սարքավորում մատակարարելու, տրանսպորտի և այլ ուղղությամբ (ըստ հնարավորության տրանսպորտն անցկացնելով տնտհաշվարկի):

3) Կադրերի ու սոցկենցաղային սպասարկման բաժին (բանվորական մատակարարման ու նրանց սոցկենցաղային սպասարկման հարցեր, կադրերի հաշվառում, վարձում ու պատրաստում, բանվորական ուժի հավաքագրում) — (աշխատում է տրեստի կառավարչի ղեկավարությամբ):

4) Վարչա-կազմակերպչական բաժին (աշխատում է կառավարչի տեղակալի ղեկավարությամբ):

5) Մեկ-յերկու հրահանգիչ՝ կատարման ստուգման ու վերահսկողության աշխատանքների գծով (աշխատում են տրեստի կառավարչի ղեկավարությամբ):

Առաջարկել Ծանր Արդյունաբերության Ժողկոմատի Գլխշինարդին՝ Ծանր. Արդ. Ժողկոմատի կազմ.

սեկտորի հետ միասին՝ սահմանել
շինարարական տրեստների հաստիք-
ները, նրանց ներկայիս կազմը կըր-
ճատելով վոչ պակաս քան 30 տոկո-
սով:

22. Բացառապես մեկ շինհրապա-
րակի սպասարկող տրեստները վե-
րանվանել և կոչել աշխատանքի պե-
տերի վարչություն՝ համապատաս-
խանորեն կրճատելով նրանց հաստիք-
ներն ու փոփոխելով կառուցվածքը:

23. Այս «հիմնական կանոնները»
տասն որվա ընթացքում կիրառման
մեջ դնել:

24. Առաջարկել Աշխատանքի Սեկ-
տորին՝ Գլխշինարդի հետ միասին՝
տասն որվա ընթացքում Ծանր Արդ.
Ժողկոմատի հաստատությանը ներ-
կայացնել ՀԱՄԿԽ-ի հետ համաձայ-
նեցված վորոշման նախագիծ՝ ար-
տադրության մեջ աշխատող ինժենե-
րա-տեխնիկական աշխատողների աշ-
խատավարձի դրույքների վերաբեր-
յալ:

25. Գլխշինարդին պարտավորեցնել
հատուկ հրահանգ և պարզաբանում-
ներ հրապարակել այս «հիմնական
կանոնների» կիրառման վերաբերյալ
(մասնավորապես աշխատանքի հա-
տուկ տեսակներ կատարող շինարա-
րական կազմակերպությունների մա-
սին):

Ծանր Արդյունաբերության
Ժողովրդական կոմիսար՝
Ս. ՈՐՋՈՆԻԿԻՁԵ

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



ՀՀ Ազգային գրադարան
NL0297721

28. 144